ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

07.02.2020թ.
ք. Երևան

Քաղաքացիական գործ
թիվ ՎԴ/8134/05/19

ՈՐՈՇՈՒՄ
Թիվ ՎԴ/8134/05/19 քաղաքացիական գործի
ենթակայությունը որոշելու մասին

1.Գործի դատավարական նախապատմությունը և ենթակայության հարցի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.

Արմինե Վարդանյանի, Նարինե Հունանյանի, Հովհաննես Վարդանյանի, Իսահակ Վարդանյանի, Լուսինե Վարդանյանի, Արամ Վարդանյանի կողմից լիազորված անձ Հովհաննես Վարդանյանի և «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի միջև 20.12.2007 թվականին կնքված հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման պայմանագրի համաձայն. «Վաճառողները վաճառում են, իսկ Ձեռքբերողը որպես սեփականություն ձեռք է բերում ք.Երևան, Կենտրոն համայնք, Արամի փողոց 9 շենքի-10 բնակարան հասցեում գտնվող 37,9քմ. ընդհանուր մակերեսով բնակելի տունը, այսուհետ՝ Օբյեկտ»:

Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից 21.02.2019 թվականին կայացված՝ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը մերժելու մասին թիվ Մ-16/02/2019-2-0083 որոշման համաձայն. «Երևան, Կենտրոն Արամի փողոց 9 շենք, 10 բնակարան հասցեի անշարժ գույքը հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման 20.12.2007թ. թիվ 11338 պայմանագրի հիման վրա իրավունքի պետական գրանցում է ստացել «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի անվամբ: Միաժամանակ հայտնում ենք, որ 14.11.2014թ. թիվ 5943 պայմանագրի հիման վրա վերը նշված հասցեի նկատմամբ գրանցվել է «Օլդ Սիթի» ՓԲԸ-ի սեփականության իրավունքը: Այնուհետև Երևանի քաղաքապետարանի

կողմից տրված 24.05.2008թ. թիվ 02/18-11025-522 քանդման թույլտվության հիման վրա շինությունը քանդվել է և ք. Երևան, Կենտրոն Արամի փողոց հասցեի 0,01836հա հողամասի նկատմամբ գրանցվել է «Օլդ Սիթի» ՓԲԸ-ի սեփականության իրավունքը: Ելնելով վերը նշվածից հայտնում ենք, որ ք. Երևան, Կենտրոն Արամի փողոց 9 շենք, 10 բնակարան հասցեով անշարժ գույք ներկայումս առկա չէ»:

Արմինե Իսահակի Վարդանյանը և Նարինե Էդուարդի Հունանյանը (այսուհետ նաև՝ Հայցվորներ) 03.10.2019 թվականին հայցադիմում են ներկայացրել Վարչական դատարան ընդդեմ Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ սեփականության իրավունքի իրավահարաբերության առկայությունը ճանաչելու, պետական մարմնի այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը ոչ իրավաչափ ճանաչելու և հետևանքների վերացման ածանցյալ պահանջների մասին:

Վարչական դատարանը (դատավոր՝ Հ.Այվազյան) 10.10.2019 թվականի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին (այսուհետ նաև՝ Դատարան)՝ հետևյալ հիմնավորմամբ.

«(…)

Ներկայացված հիմնական հայցապահանջով հայցվորը խնդրում է ճանաչել սեփականության իրավունքի անընդհատ իրավահարաբերության առկայությունն անշարժ գույքի նկատմամբ, իսկ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է իրավունքը ճանաչելով: Վերոշարադրյալ իրավական նորմերի մեկնաբանությունից պարզ է դառնում, որ սեփականության իրավունքի անընդհատ ճանաչման վրա տարածվում են քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող օրենքները, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից պարզ է դառնում, որ Վարչական դատարանին ընդդատյա չեն մասնավոր բնույթի վեճերը»:

30.10.2019 թվականին թիվ ՎԴ/8134/05/19 քաղաքացիական գործը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում մակագրվել է դատավոր Ա.Սուքոյանին:

Դատարանը 01.11.2019 թվականի որոշմամբ թիվ ՎԴ/8134/05/19 քաղաքացիական գործը հանձնել է Սնանկության դատարանի քննությանը՝ հետևյալ հիմնավորմամբ.

«(…)

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ 2. Սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ, քննվում են նույն սնանկության գործի շրջանակում:

Հայցադիմումի ուսումնասիրությունից հետևում է, որ դրանով նկարագրված վեճն առաջացել է սնանկ ճանաչված «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի գույքի կազմում ընդգրկված՝ քաղաք Երևան, Արամի փողոց, 9 շենք, թիվ 10 հասցեում անշարժ գույքի առնչությամբ, որպիսի պայմաններում այն ենթակա չէ ընդհանուր իրավասության դատարանի քննությանը»:

21.11.2019 թվականին թիվ ՎԴ/8134/05/19 դատական գործը Սնանկության դատարանում մակագրվել է դատավոր Տ.Փոլադյանին:

27.11.2019 թվականին Սնանկության դատարանը կայացրել է գործը վարույթ ընդունելու մասին որոշում:

Այնուհետև, 02.12.2019 թվականին կայացված որոշմամբ թիվ ՎԴ/8134/05/19 քաղաքացիական գործն ուղարկել է Դատարան՝ հետևյալ հիմնավորմամբ.

«(…)

Տվյալ պարագայում, թիվ ԵԿԴ/0078/04/15 սնանկության գործով պարտապան «Գլենդել Հիլզ» ՓԲ ընկերությունը հանդես չի գալիս ՎԴ/8134/05/19 քաղաքացիական գործով որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ, ուստի Դատարանը գտնում է, որ թիվ ՎԴ/8134/05/19 քաղաքացիական գործը ենթակա է հանձնման ըստ ընդդատության՝ ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան»:

21.01.2020 թվականին Դատարանում քաղաքացիական գործը մակագրվել է դատավոր Ա. Սուքոյանին:

Դատարանը, վկայակոչելով «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածը, 23.01.2020 թվականի որոշմամբ թիվ ՎԴ/8134/05/19 քաղաքացիական գործն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ հետևյալ հիմնավորմամբ.

«(…)

Բացի այդ, ներկայացված հայցի առարկայից երևում է, որ սույն գործի քննությունը անխուսափելիորեն ազդելու է «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի իրավունքների վրա՝ հաշվի առնելով, որ հայցի հնարավոր բավարարումը հանգեցնելու է «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի գույքային զանգվածի նվազեցմանը:

Այսինքն, գործի քննության ընթացքում «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ն՝ ի դեմս սնանկության գործով կառավարչի, բոլոր դեպքերում ներգրավվելու է որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ և գործը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի տառացի մեկնաբանությամբ անգամ ենթակա է լինելու ՀՀ սնանկության դատարանի քննությանը:

Մինչդեռ, ընդհանուր իրավասության դատարանի կողմից գործի քննություն սկսելը և այն հետագայում մեկ այլ դատարանի քննությանը հանձնելը չի բխում դատական խնայողության սկզբունքից»:

Թիվ ՎԴ/8134/05/19 քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 01.02.2020 թվականին:

2. Կիրառելի իրավական նորմերը, պատճառաբանությունները և եզրահանգումը.

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 18-րդ հոդվածը սահմանում է քաղաքացիական գործերի ենթակայությունը, որի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործերը ենթակա են

քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սնանկության դատարանին են ենթակա սնանկության հարաբերությունները կարգավորող օրենքով նախատեսված բոլոր գործերը:

«Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ, քննվում են նույն սնանկության գործի շրջանակում:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը գործը հանձնում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության սնանկության դատարանում:

Օրենսգրքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին կայացվում է որոշում:

Օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն.

1. Գործն ըստ տարածքային ընդդատության կամ ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ

ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը:

2. Վճռաբեկ դատարանի նախագահը հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը:

3. Վճռաբեկ դատարանի նախագահի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան:

4. Սույն հոդվածով սահմանված կարգը կիրառվում է նաև վարչական կամ սնանկության դատարանի կողմից համապատասխանաբար վերահասցեագրված հայցադիմումի կամ հանձնված գործի նկատմամբ:

Մինչև բարձրացված խնդրի լուծմանն ըստ էության անդրադառնալը՝ հարկ է արձանագրել, որ Վճռաբեկ դատարանի նախագահը սույն որոշմամբ լուծում է միայն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի և Սնանկության դատարանի միջև թիվ ՎԴ/8134/05/19 քաղաքացիական գործի ենթակայության կապակցությամբ ծագած վեճը: Հետևաբար, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ սույն որոշման կարգավորման շրջանակը չի կարող ներառել մինչ այս վեճը ծագելը գործով տեղի ունեցած դատավարական մյուս գործողությունների իրավաչափության գնահատումը, մասնավորապես՝ Վարչական դատարանի կողմից գործը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան վերահասցեագրելու դատավարական գործողության իրավաչափությունը՝ պայմանավորված համապատասխան դատարանների կողմից նման հարց (ենթակայության վեճ) բարձրացված չլինելու հանգամանքով:

Այսպես.

Վերը նշված իրավակարգավորումների համակարգային վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից քաղաքացիական գործերը Սնանկության դատարանի քննությանը կարող են հանձնվել միայն համապատասխան դատավարական գործողությունների կատարման միջոցով հետևյալ փաստական հանգամանքների առկայության պարզման արդյունքում:

Քաղաքացիական գործը Սնանկության դատարանում քննության ենթակա լինելու վերաբերյալ իրավակարգավորումները սահմանված են «Սնանկության

մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով, որի համաձայն՝ սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ, քննվում են նույն սնանկության գործի շրջանակում:

Նշված իրավակարգավորման բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ մեկնաբանումից հետևում է, որ քաղաքացիաիրավական վեճ քննող առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն իր վարույթում քննվող գործը Սնանկության դատարանի քննությանը ենթակա լինելու վերաբերյալ եզրահանգում կատարելու համար պետք է գործով պարզի հետևյալը.

Ա) արդյոք քաղաքացիական գործով վեճը ծագել է սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ,

Բ) արդյոք սնանկության գործով պարտապանն է հանդիսանում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննվող քաղաքացիաիրավական վեճով պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի իրավակարգավորումների լույսի ներքո մեկնաբանելով «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը՝ պետք է փաստել, որ միայն վերը նշված երկու պայմանների միաժամանակյա առկայությամբ գործը Սնանկության դատարանի քննությանը հանձնված լինելու դեպքում է հնարավոր արձանագրել, որ գործն ըստ ենթակայության ուղարկած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը չի հանդիսանում այն պատշաճ դատարանը, որը տվյալ գործով պետք է իրականացնի հետագա քննություն:

Վերոգրյալ իրավակարգավորումները, դրանց վերաբերյալ կատարված վերլուծությունները համադրելով սույն քաղաքացիական գործի նյութերում առկա փաստական տվյալների հետ՝ կարելի է արձանագրել, որ թիվ ՎԴ/8134/05/19 քաղաքացիական գործով Արմինե Իսահակի Վարդանյանը և Նարինե Էդուարդի Հունանյանը հայցադիմում են ներկայացրել դատարան ընդդեմ Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի՝ սեփականության իրավունքի իրավահարաբերության առկայությունը ճանաչելու, պետական մարմնի այլևս իրավաբանական ուժ չունեցող

միջամտող վարչական ակտը ոչ իրավաչափ ճանաչելու և հետևանքների վերացման ածանցյալ պահանջների մասին: Այսինքն՝ սույն գործով ներկայացված հայցադիմումով որպես պատասխանող նշված է միայն Անշարժ գույքի կադաստրի կոմիտեն:

Միաժամանակ հարկ է նշել, որ գործում առկա նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ «Գլենդել Հիլզ» ՓԲ ընկերությունը թիվ ՎԴ/8134/05/19 քաղաքացիական գործով որևէ դատավարական կարգավիճակ, մասնավորապես՝ պատասխանողի կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձի չունի:

Այսպես. վերը նշվածը թույլ է տալիս հստակորեն արձանագրել, որ Դատարանի կողմից պատշաճ գնահատականի չի արժանացել այն հանգամանքը, որ թիվ ՎԴ/8134/05/19 քաղաքացիական գործով պատասխանող է Անշարժ գույքի կադաստրի կոմիտեն, իսկ «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ն չունի որևէ դատավարական կարգավիճակ: Մինչդեռ, վերը նշված իրավական վերլուծություններից հետևում է, որ քաղաքացիական գործը Սնանկության դատարանի քննությանը հանձնելու համար պարտադիր նախապայմաններից է հանդիսանում այն հանգամանքը, որ սնանկության գործով հենց պարտապանը պետք է հանդիսանա առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննվող քաղաքացիաիրավական վեճով պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ և քաղաքացիական վեճը պետք է ծագած լինի վերջինիս գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ:

Վերոգրյալից հետևում է, որ քաղաքացիական գործում առկա չեն եղել անհրաժեշտ և բավարար փաստական տվյալներ՝ Դատարանի կողմից քաղաքացիական գործը Սնանկության դատարանի քննությանը հանձնելու համար:

Միաժամանակ անդրադառնալով Դատարանի այն պատճառաբանությանը, որ սույն գործի քննությունն անխուսափելիորեն ազդելու է «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի իրավունքների վրա և գործի քննության ընթացքում «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ն՝ ի դեմս սնանկության գործով կառավարչի, բոլոր դեպքերում ներգրավվելու է որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ և գործը

«Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի տառացի մեկնաբանությամբ ենթակա է լինելու Սնանկության դատարանի քննությանը, հարկ է նշել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձն իրականացնում է իր դատավարական իրավունքները, տնօրինում է դատական պաշտպանության միջոցները և եղանակները սեփական հայեցողությամբ՝ օրենքով սահմանված կարգով:

Օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձինք կարող են հայցադիմում ներկայացնելու միջոցով գործի մեջ մտնել մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը, իսկ սույն օրենսգրքի 40-42-րդ գլուխներով նախատեսված կարգով քննվող գործերով՝ մինչև դատարանի կողմից եզրափակիչ դատական ակտը հրապարակելը:

Օրենսգրքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք կարող են ներգրավվել գործին իրենց միջնորդության հիման վրա:

Օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը նախնական դատական նիստի ընթացքում պարզում է դատավարության մասնակիցների կազմը, լուծում է գործի քննությանն այլ անձանց ներգրավելու հարցը:

Օրենսգրքի 172-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, մինչև նախնական դատական նիստի ավարտը պարզելով, որ հայցը հարուցվել է ոչ այն անձի դեմ, որը պետք է պատասխանի այդ հայցով, կարող է հայցվորի համաձայնությամբ թույլ տալ, որ պատասխանողը փոխարինվի պատշաճ պատասխանողով:

Օրենսգրքի 173-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցվորը, գտնելով, որ հայցը ներկայացվել է ոչ բոլոր անձանց դեմ, որոնք պետք է պատասխանեն այդ հայցով, մինչև նախնական դատական նիստի ավարտը կարող է առաջին ատյանի դատարանին ներկայացնել այդ անձանց որպես պատասխանող ներգրավելու վերաբերյալ գրավոր միջնորդություն:

Վերոգրյալ իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիական դատավարությունում գործում է տնօրինչականության սկզբունքը, այսինքն՝ դատավարության մասնակիցներն օրենքով սահմանված իրենց դատավարական իրավունքներն իրականացնում են և դատական պաշտպանության միջոցները և եղանակները տնօրինում են սեփական հայեցողությամբ և ինքնուրույնաբար:

Դատարանը գործի քննությանն այլ անձանց ներգրավելու հարցը պարզում է նախնական դատական նիստի ընթացքում: Ընդ որում, նոր պատասխանող հնարավոր է ներգրավել բացառապես *հայցվորի միջնորդության հիման վրա*, իսկ ոչ պատշաճ պատասխանողի փոխարինումը հնարավոր է *միայն հայցվորի համաձայնությամբ*: Ինչ վերաբերում է երրորդ անձանց, ապա ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձինք կարող են գործի մեջ մտնել *հայցադիմում ներկայացնելու միջոցով*, իսկ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք կարող են ներգրավվել գործին իրենց *միջնորդության հիման վրա:* Այս իրավակարգավորումներն արտացոլում են քաղաքացիական դատավարության տնօրինչականության սկզբունքը, որի համաձայն՝ գործին մասնակցող անձը տնօրինում է դատական պաշտպանության միջոցները և եղանակները սեփական հայեցողությամբ՝ օրենքով սահմանված կարգով: Հետևաբար, գործի ենթակայության հարցի որոշումը չի կարող հիմնվել հետագայում հնարավոր ծագող այնպիսի հանգամանքի վրա, թե գործին մասնկացող անձինք գործի քննության ընթացքում ինչպես կօգտվեն քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված և երաշխավորված տնօրինչականության սկզբունքից և ինչպես կտնօրինեն դատական պաշտպանության միջոցները և եղանակները:

Վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները թույլ են տալիս եզրակացնել, որ թիվ ՎԴ/8134/05/19 դատական գործը Սնանկության դատարանին ըստ ենթակայության հանձնելու համար գործում բացակայում են անհրաժեշտ փաստական և իրավական ամբողջական հիմքերը, ուստի, թիվ ՎԴ/8134/05/19 դատական գործը պետք է հանձնել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

Միաժամանակ, «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումն անհրաժեշտ է վերլուծել Օրենսդրի կամքի՝ ժամանակագրական իմաստով զարգացման և դրա հիման վրա տեղի ունեցած օրենսդրական նոր փոփոխությունների բովանդակության բացահայտման տեսանկյունից:

Այսպես. «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ, քննվում են նույն սնանկության գործի շրջանակում:

Նման իրավակարգավորում սահմանելիս Օրենսդիրը նպատակ է հետապնդել ապահովել սնանկության գործընթացի արդյունավետությունը, այդ թվում՝ ապահովել սնանկության գործի վարման ամբողջականությունը, գործով բացահայտել հնարավոր բոլոր պարտատերերին և նրանց պահանջները, սնանկության վարույթով անցնող ցանկացած գույքի վերաբերյալ հարցի քննարկում կազմակերպել միայն սնանկության վարույթում, ինչը կապահովի սնանկության վարույթի արդյունավետությունը և սնանկության վարույթի մասնակիցների իրավունքների ամբողջական իրացումը, քաղաքացիական և սնանկության գործերի ողջամիտ ժամկետում քննությունը, բացառելով հանդերձ նույն գույքի կամ իրավունքի վերաբերյալ տարբեր դատարաններում քննվող գործերի, ինչպես նաև դատական ակտերի առկայությունը և այլն:

Օրենսդրի այս կամքն իր ցայտուն արտահայտումն է ստացել տեղի ունեցած օրենսդրական փոփոխություններում, որպիսի իրավիճակում ուշադրության է արժանի «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Ազգային ժողովի կողմից ընդունված 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքը (ուժի մեջ է մտնելու 15.04.2020թ.):

Այսպես. «Սնանկության մասին» օրենքի նոր խմբագրությամբ 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի

առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործերը, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի, քննում է սնանկության գործը վարող դատավորը նույն սնանկության գործի շրջանակում՝ որպես առանձին քաղաքացիական գործեր (այսուհետ՝ առանձին քաղաքացիական գործեր):

Նշված նոր իրավակարգավորման բովանդակության բացահայտման արդյունքում կարելի է արձանագրել, որ Օրենսդրի սահմանած նոր իրավակարգավորումն ենթադրում է քաղաքացիական գործերի առավել լայն շրջանակի քննություն սնանկության վարույթի շրջանակում, մասնավորապես՝ այն քաղաքացիական գործերը, որոնք կապված են սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերի հետ (բացառությամբ սնանկության գործերով կառավարչների կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի): Ընդ որում հարկ է նկատել, որ նոր իրավակարգավորումն այլևս պարտադիր պահանջ չի նախատեսում սնանկության վարույթում պարտապան հանդիսացող անձի՝ քաղաքացիական գործում ունեցած դատավարական կարգավիճակի մասին:

Այս առումով ուշադրության է արժանի նաև վերը նշված օրենքի անցումային դրույթներով սահմանված իրավակարգավորումների բովանդակությունը, մասնավորապես՝ Օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի ապրիլի 15-ից և տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հարուցված սնանկության գործերի վրա: Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը հարուցված սնանկության գործերը վարվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի նորմերով:

Հետևաբար, պետք է փաստել, որ 2020 թվականի ապրիլի 15-ից հետո (ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետ) առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները և Սնանկության դատարանը վերոգրյալ օրենսդրական փոփոխությունների բովանդակությանը համահունչ պետք է գնահատականի արժանացնեն քաղաքացիական գործերի ենթակայության հարցերի հետ կապված հնարավոր վեճերի առկայության կամ բացակայության հարցերը:

Հիմք ընդունելով գործում առկա հանգամանքները, վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները, և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ ՎԴ/8134/05/19 քաղաքացիական գործը ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

2. Սույն որոշումը և թիվ ՎԴ/8134/05/19 քաղաքացիական գործի նյութերն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

3. Որոշման օրինակն ուղարկել Սնանկության դատարան:

ԵՐՎԱՆԴ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ